

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ԻՑ 28-Ը ՓԱՐԻՋ ԿԱՏԱՐԱԾ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ ՎԱՐԴԱՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ
2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ Փարիզ/Նոյեմբերի 25-ից 28-ը
4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ
ԱՐԱԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՄ ՋՐԱՅԻՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ +
5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՐ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).

EUWI + շաբաթվա նպատակն էր խթանել EUWI + ծրագրի առաջընթացը և վեց երկրների պաշտոնատար ներկայացուցիչներին տեղեկացնել ջրային քաղաքականության և ջրերի համապարփակ կառավարման վերաբերյալ վերջին զարգացումների մասին: Այս շաբաթվա ընթացքում կազմակերպվեցին ուսումնական այցեր և սեմինարներ, որոնք հնարավորություն տվեցին ծրագրի գործընկերներին և ֆրանսիացի փորձագետներին հետագա փորձի փոխանակման համար:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդիպումը համախմբեց ծրագրի իրականացնող գործընկերների՝ ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի /UNECE/, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /OECD / և ԵՄ անդամ պետությունների պետական պաշտոնյաների, պատվիրակությունների և

տնտեսագետների, Արևելյան գործընկերության վեց երկրների (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա), Եվրահանձնաժողովի և Ֆրանսիայի իշխանությունների (նախնարարություններ, ջրային գործակալություն) ներկայացուցիչների: Յուրաքանչյուր ներկայացրեցինք մեր երկրում տիրող ոլորտային իրավիճակը, ներկա գործընթացները, խնդիրները:

2020 թվականին ծրագրի հիմնական առանցքային արդյունքը վեց երկրների ութ գետավազաններում փորձնական մշակված գետավազանային կառավարման նոր ծրագրերն են, ներառյալ ջրային լաբորատորիայի և ջրի մոնիտորինգի սարքավորումների արդիականացումը: Ուղենիշային փաստաթուղթը և նոր սարքավորումների կարողությունները ապահովում են ջրային տնտեսության գլոբալ և ինտեգրված մոտեցում՝ հաշվի առնելով տնտեսական, սոցիալական և էկոլոգիական տարբեր հիմնահարցեր, որոնք կուղղորդեն ջրերի կառավարման համապատասխան կայուն ռազմավարությունների մշակմանը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՅԵՐԸ

ԵՄ Ջրային Նախաձեռնություն Պլույս ծրագրի շրջանակում Փարիզ աշխատանքային այցելության ժամանակ հանդիպել եմ UNESCO-ի Միջազգային Հիդրոլոգիական Ծրագրի տնօրեն՝ Յուսեֆ Ֆիլալի-Մեկնասի և «Ջուր բնակավայրերին» ծրագրի մասնագետ՝ Ալեկսանդրոս Մակարիգակիսի հետ:

Հանդիպմանը նաև մասնակցեցին ԵՄՋՆ+ «Հայաստանում գետավազանային կառավարման մասնակցային պլանավորման համար գործողությունների պլանի իրականացման նպատակով հաղորդակցության աջակցություն» ծրագրի փորձագետները:

Քննարկման հիմնական առարկան հանդիսացավ Քաղաքներում ջրային կառավարման ծրագրային առաջարկի մշակման հարցը: Մանրամասն ներկայացրել եմ Սևանա լճի ջրօգտագործման վերաբերյալ, ինչպես նաև լճի մերձափնյա համայնքների ջրահեռացման խնդիրները, գոյություն ունեցող կեղտաջրերի մաքրման կայանների շահագործման մանրամասները, լիճը աղտոտող աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը և այլ մանրամասներ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ի լրումն ԵՄՋՆ+ ծրագրի ֆինանսավորմամբ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում ոռոգման ջրի հաշվառման 50 դիտակետերի սարքավորումներով կահավորման ծրագրի, պայմանավորվածություն է ձեռք բերվել ևս 33 դիտակետեր (Սևանի ջրավազանի) ներառելու վերը նշված ծրագրում:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

UNESCO-ի թիմի հետ քննարկան ընթացքում նրանց կողմից առաջարկվեց կատարել պիլոտային տարածքի ընտրություն, որի համար միջազգային փորձագետների օգնությամբ կարող է մշակվել ջրային ռեսուրսների կառավարման մաթեմատիկական մոդել:

Որպես պիլոտային տարբերակ առաջարկեցի դիտարկել Գավառ, Վարդենիս, Մարտունի քաղաքները՝ իրենց հարակից գյուղական համայնքներով, որոնց համար կեղտաջրերի տեղափոխման և մաքրման ամբողջական գործընթացը հասկանալու համար չափազանց կարևոր է ունենալ տեխնիկատնտեսական հիմնավորում:

UNESCO-ի թիմը խաստացավ դիտարկել այս առաջարկը: Հաջորդ տարվա մարտ ամսին նախատեսվում է UNESCO-ի հիդրոլոգիական հանձնաժողովի այցելությունը Հայաստան, որի շրջանակներում կնախատեսվի նաև այս հարցի մանրամասն քննարկումը Ջրային կոմիտեի մասնագետների հետ:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

03.12.2019թ.

